ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք,
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 6-րդ փող.1,
Հեռ. 098-910-932 , qaxsi.kotayk@mail.ru

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԱՇԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

N 031-206
03 *սեպտեմբերի* 2021թ.

Հարգելի պարոն Սահակյան.

Ներկայացնում ենք Քաղսի համայնքի ղեկավարի կողմից 2021 թվականի ընթացքում ընդունված որոշումները՝ օգոստոսի 11-ից մինչև օգոստոսի 31-ը:

Առդիր՝ 12 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատ. Լ. Խաչատրյան
091535275

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 91

ՎՈԼՈԴՅԱ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի պահանջներով.

Որոշում եմ՝

1. Վոլոդյա Ղազարյանին Կոտայքի մարզի Քաղսի համայնքի վարչական տարածքում 07-063-0303-0004 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար, ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակել տուգանք 100.000/ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:
2. Տուգանքի վճարումը կատարել սույն որոշման ստացման պահից 15-օրյա ժամկետում՝ հետևյալ հաշվեհամարով՝ 900125010208:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրը:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. _օգոստոսի __ _11 _
գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 92

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի N 89 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով.

Որոշում եմ՝

1. Քաղսի համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 11-ի << Ինքնակամ բնակելի տան և օժանդակ շինության օրինականացման մասին >> N89 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա/ Որոշման 2-րդ կետում <<271.986 / երկու հարյուր յոթանասունմեկ հազար ինը հարյուր ութսունվեց />> բառերը փոխարինել << 297. 510 / երկու հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր տաս >> բառերով:

բ/ Որոշման 4-րդ կետում <<271.986>> թիվը փոխարինել <<297.510>> թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. _օգոստոսի __ _17 _

գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N93

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականին դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով՝ Զորիկ Ապետնակի Մանուկյանի դիմումը.

Որոշում եմ՝

1. Քաղսի համայնքի վարչական տարածքում գտնվող Զորիկ Ապետնակի Մանուկյանին պատկանող սեփական բնակելի տանը (ծածկագիր 07-063-026-005-001) տրամադրել հասցե՝ գ. Քաղսի 3-րդ թաղամաս, տուն՝ 26:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. _օգոստոսի _ _17_
գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 94

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՆԹԱԱՆԱԼԻՏԻԿ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԱԽՇՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և Քաղսի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 40 որոշմամբ.

Որոշում եմ՝

Դասակարգման սակարկման նույն ծրագրի շրջանակներում կատարել ենթաանալիտիկ հաշիվների վերաբախշումը՝

1. 06.4.1.51 ծրագրի 4216 << Գույքի և սարքավորումների վարձակալություն >> ենթաանալիտիկ հաշվի <<100 000>> թիվը փոխարինել <<0.0>> թվով:
2. 06.4.1.51 ծրագրի 4212 << Էներգետիկ ծառայություններ >> ենթաանալիտիկ հաշվի <<600 000>> թիվը փոխարինել << 700 000>>թվով:
3. Սյուն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. _ օգոստոսի ___ _17 _
գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 95

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ 07-063-0038-0017 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, << Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով.

Որոշում եմ՝

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 07-063-0038-0017 ծածկագրի տակ գտնվող 0.12158 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ Թամարա Սիսակի Եղիազարյանի / ծնված 1932թ / սեփականության իրավունքը:
2. Հողամասը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և / կամ/ չի առաջացնում սերվիտուտ:
3. Վերականգնել և ճանաչել 0.12158 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքի պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջող իրավունք չառաջացնող 1967 թվականին կառուցված 152.89 քմ բնակելի տան և օժանդակ շինությունների/ 159.82 քմ/ նկատմամբ Թամարա Սիսակի Եղիազարյանի սեփականության իրավունքը:
4. Անշարժ գույքի սահմանները որոշվում են <<ՊԻՌԱՄԻԴԱ>> ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և այն հանդիսանում է սույն որոշման բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. __օգոստոսի __ _30_
գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 96

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ 07-063-0347-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ / ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԹԱՄԱՐԱ ՍԻՍԱԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 51-54-րդ, 56-րդ, 57-րդ 59-րդ, 60-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 135-րդ և 202-րդ հոդվածների, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքի 07-063-0347-0001կադաստրային ծածկագրերի գյուղատնտեսական նշանակության 0,41927հա մակերեսով (խոտհարք) նկատմամբ վերականգնել հողհատկացման հիմքերը և այն օրենքի ուժով համարել որպես սեփական գույքը տիրապետող ֆիզիկական անձանց՝ Թամարա Սիսակի Եղիազարյանի /ծնված՝ 1932թ./, սեփականությունը:
2. Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը չի

սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

4. Անշարժ գույքի սահմանները որոշվում են << ՊԻՌԱՄԻԴԱ >> ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և այն հանդիսանում է սույն որոշման բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

5. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. __օգոստոսի __ _30_
գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 97

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականին դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով՝ Մաքսիմ Եղիազարյանի դիմումը.

Որոշում եմ՝

1. Քաղսի համայնքի վարչական տարածքում գտնվող Թամարա Սիսակի Եղիազարյանին պատկանող սեփական բնակելի տանը (ծածկագիր 07-063-0038-0017) տրամադրել հասցե՝ գ. Քաղսի 11-րդ փողոց, տուն՝ 28:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. _օգոստոսի _ _30_
գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 98

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով.

Որոշում եմ՝

1. Քաղսի համայնքի ղեկավարի 2021 թվականի հուլիսի 30 -ի << Քաղսի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին>> N81 որոշումն ուժը կորցրած ճանաչել:

2. Քաղսի համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 04 -ի << Ինքնակամ օժանդակ շինության օրինականացման մասին >> N86 որոշումն ուժը կորցրած ճանաչել:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

20 21 թ. ___օգոստոսի__ _31_
գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 99

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ԻՐ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՊԱՐԻՍՊՈՎ ՈՐՊԵՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արթուր Գևորգյանի 27.08.2021թ-ի դիմումը.

Որոշում եմ.

1. Քաղաքացի Արթուր Այվազի Գևորգյանին ուղղակի վաճառքով օտարել Քաղսի համայնքի վարչական տարածքում 10-րդ փողոց 6-րդ նրբանցք 21/1 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման համար նախատեսված / կադաստրային ծածկագիր 07-063-0087-0064/ 0.00334 (հա) մակերեսով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին չդասվող համայնքային սեփականություն համարվող հողամասն իր օժանդակ շինությամբ և պարիսպով:
2. Հողամասի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով 62725 (վաթսուն երկու հազար յոթ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ, իսկ օժանդակ շինության /կադաստրային ծածկագիր 07-063-0087-0064-001 10.61քմ/ և պարիսպի /կադաստրային ծածկագիր07-063-0087-0064-002 1.84քմ, 4.42խմ/ գինը սահմանել 10622/ տաս հազար վեց հարյուր քսան երկու/ ՀՀ դրամ :
3. Արթուր Գևորգյանից որպես օրինականացման վճար նրանից գանձել 73347 /յոթանասուներեք հազար երեք հարյուր քառասունյոթ/ ՀՀ դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021թ. _օգոստոսի __31__
գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 100

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Սարիբեկ Ենոքյանի 08.07.2021թ /հասցե՝ գ. Քաղսի 1-ին փողոց թիվ 4/2 / դիմումը.

Որոշում եմ՝

1. Համաձայնեցնել կառուցապատող Կոտայքի մարզի Քաղսի համայնքի բնակիչ՝ Սարիբեկ Ենոքյանի նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Կոտայքի մարզի Քաղսի համայնքի 1-ին փողոց թիվ 4/2 հասցեում գտնվող՝ կադաստրային ծածկագիր 07-063-0039-0007 0.003 հա մակերեսով /նպատակային և գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման / սպասարկման օբյեկտի կառուցման աշխատանքների համար:

2. Շինարարական աշխատանքները սկսելուց 3 (երեք) օր առաջ ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

3. Սյուն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. __օգոստոսի __ _31_
գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2021 թվականի N 101

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Քաղսի համայնքի բնակիչների Գեղամ Խաչատրյանի, Նաթելլա Մելքոնյանի և Արմեն Գևորգյանի դիմումները՝ դրամական օգնության վերաբերյալ.

Որոշում եմ՝

1. Քաղսի համայնքի բնակիչներ, սոցիալապես անապահով , Գեղամ Խաչատրյանին, Նաթելլա Մելքոնյանին և Արմեն Գևորգյանին տրամադրել դրամական օգնություն յուրաքանչյուրին 50 000 (հիթսուն հազար) ՀՀ դրամի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. _օգոստոսի __ 31 _
գ.Քաղսի